

Ընդհատ՝ ձգուած ժամանակի յաւերժին:
 Ցորեն ատոմ, իմացական սերմնացան,
 Ի իսակ ոսկի, անմահութեան արեւին,
 Փառապըսա՛կ էք, Հայ Տառն՝ Մեսրոպեան.
 Քընարնե՛ր էք դուք Գողթնի.
 Ե՛ւ կոչ, ե՛ւ կանչ, ե՛ւ շեփոր՝
 Օշականի ըստեղծագործ հանճարին:
 Տրիկէն մինչեւ Նարեկացի, Վարուժան՝
 Ա. Բ. Գ.ին հըրաշքնե՛րն են լուսածին....:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

Փարիզ, 20 Սեպտ. 1962

ԵՐԵՍՈՒՆԸՎԵՑ ԱՌԱՔԵԼ ԵՐԵՈՒ ԳՈՒՄԱՐՏԱԿԸ

(Ս. Մեսրոպ Մաշտոցի Ծննդեան 1600ամեակի առիթով)

Հայ վեանքը ահազանդերու կեանք մըն է.
 Մարտկոցներու, փշաթելերու, խրամատներու կեանք մը.
 Աշխարհի բոլոր քառուղիներուն վրայ,
 Անդադար կ'ազդարարեն յուշարարները, —
 Հաստատ կեցէք ձեր սրունքներուն վրայ,
 Ձեր մէջքերը ըլլան անձկելի, ամո՛ւր,
 Ձեր ճակատները բարձր, ու նայուածքը հորիզոններէն անդին.
 Ձէ՞ք լսեր շեփորներուն խրախուսանքը, հրաւէրը,
 Ձէ՞ք տեսներ պայքարներուն շառագունած դէմքը,
 Դրօշներու ալեծփումը դիրքէ դիրք,
 Աշխարհի բոլոր ռազմաճակատներուն վրայ:

Բայց ո՞վ են հայուն այդ աշխարհասփիւռ ռազմիկները,
 Այդ աներկրորդելի կտրիճները, կրակի առաջին զօրն վրայ.
 Արեւելէն Արեւմուտք, Հիւսիսէն Հարաւ,
 Նո՛յն շեփորներն ու նո՛յն յուշարարները.
 Ո՞վ են այդ նաւաստիները, որոնք հուժկու բազուկներով,
 Նաւակոծութեան մը մէջ, անողորմ եւ տանջալից,
 Կը պարզեն առազաստները, մինչ տարերքը կ'ոռնան դայլերու պէս,
 Ո՞վ են անոնք, որոնք անտեսելով ազատարար դօտի, մակոյկ,
 Թեզանիքները սօթտած, վե՛ր կը բռնեն կքող կայմերը.
 Ա՛հ, ճանչնա՛նք այդ հերոսները,
 Կրակի առաջին զօրն վրայ, իրենց լիութեանը մէջ:



Անոնք, հայ ցեղին հաղարամեայ քաջարիները,
 Զաւակները Սուրբ Մաշտոցի հրաշագեղ մտքին,
 Տասնըվեց դարերէ ի վեր կը մղեն ահաւոր միակ պայքար մը.
 Կը պայքարին վանքերու մէջ, դրասեղաններու առջեւ,
 Կը պայքարին հայ մամուլին անօրինակ պատնէշներէն,
 Ուր խոչալով յաղեցած դրագէտը, հրապարակադիրը,
 Ցլամարտիկներու պէս, որոնք կ'ելլեն մահուան դէմ,
 Անվերջ կը շարժեն գրիչը. ա՛հ, անխմանալի այդ ախոյեանները,
 Որոնց զրկանքին առջեւ ո՞վ պիտի չուզէր խոնարհել ճակատը,
 Այդ բոլոր ցամաքամասերուն վրայ գործող յառաջադնացներու խմբակը,
 Ուխտեալները զաղափարին, անոր կամակատարները:

Երեսունըվեց զօրականներ են անոնք, առաւել երկու
 ձանչցած են զիշերներուն խաւարը, լոյսը արեւակին,
 Անցած են անպատմելի կոտորածներու ընդմէջէն,
 Տեսած են ատելութեան դէմքը, եաթաղանը չարադործին,
 Բայց զինուորներու պէս, որոնք չեն զիտեր ի՛նչ է դասալքութիւնը,
 Դիմագրաւած են ոսոխը, ոճիրը, նախճիրը,
 Ու շարունակած են քալել մարդոց վրայ եւ կեանքին դէմ,
 Շարունակած են քալել, ինչպէս վայել է սրտոտ ուղղութիւնը,
 Ինչպէս վայել է արդարին, իրաւունքին,
 Մինչ արշալոյսները կը բողբոջեն պարտէզներու պէս,
 Ու մեծ խաղաղութիւնը կը յաջորդէ ամենամեծ պատերազմին:

Բերէք զանոնք իմ առջեւ, երեսունըվեցն ու առաւել երկուքը,
 Կ'ուզեմ տեսնել այդ չքախումբը, անոնց զէնուդարդը,
 Կ'ուզեմ չօչափել կարճեղ բազուկները, սեղմել ձեռքերը,
 Բերէք առջեւ անառիկ ամբողջներու այդ բնակիչները,
 Բոլորն ալ համահաւասար հասակով, ծնունդով,
 Բոլորն ալ միակ հօր մը անյաղթելի դաւակները.
 Տասնըվեց դարերէ ի վեր կ'ապրին ոգորելով,
 Ի՛նչ վէրքեր եւ սպիներու ի՛նչ կէտկիտում
 Անոնց փառապանծ ճակատներուն վրայ, բազկին.
 Այսպէս կ'ըլլան քաջարիները, երբ կ'իջնեն ասպարէզ,
 Պաշտպանելու համար հայրենի հողը, ցեղին գոյութիւնը:

Ահաւասիկ անոնք, — երեսունըվեցն ու առաւել երկուքը, —
 Հոյակապ ջոկատ մը, չորս զօրասիւններով,
 Առջեւէն կը քալէ նախկին ռազմիկ Սուրբը, ապա իր Կորիւնները,
 Ամբոխը կը դիտէ զանոնք զմայլանքով,
 Կը դիտէ իր սիրոյն այդ սիրեցեալները,
 Մինչ ճամբաները կը դղրդան խանդավառութիւնով,
 Ու հայ ցեղին հողեպարար աղջիկները,
 Ծաղկեփունջեր եւ դափնիներ ի ձեռին,
 Կ'ողջունեն անդիմադրելի այդ յաղթականները,
 Յաղթականները անվերջանալի մարտնչումներու,
 Աշխարհի բոլոր ռազմաճակատներուն վրայ:

Թէպէտեւ երեսունըվեց, առաւել երկու,
Անոնք կը վերածուին բիւր բիւրաւորներու, միլիոն միլիոնի վրայ,
Երբ պահն է ոգորման, կենաց եւ մահու պայքա՛րը.
Վարժարաններու մէջ, վանքերու ծոցին,
Խմբագրատուններու հերոսական դիմադրական դժերուն վրայ,
Եւ գրչին ծայրը գրագէտին,
Կը բազմապատկուին անհաշիւ բազմապատկումներով,
Ու կը յորդին գետերու պէս,
Կը դահավիժին ինչպէս լեռնէն իջնող երիտասարդ հեղեղը,
Զի ընդհարման ժամն է, ժա՛մն է իրենց առաքելութեան՝
Աշխարհի բոլոր ռազմաճակատներուն վրայ:

Ե՞րբ պիտի հասնի հանգստեան անոնց ժամը,
Ե՞րբ պիտի բոլորուին խարոյկներու շուրջ,
Ե՞րբ պիտի բարձրացնեն վրանները, ձերբադատուին դէնքերէն,
Զի չկայ զինուոր մը, արձակադէն մը, ահաբեկիչ մը,
Որ յետ մղելու իր պայքարը,
Զըղձայ բարձի մը երանութիւնը, երդիքի մը հովանին.
Ու անոնք տասնըվեց դարերէ ի վեր է որ կ'ոգորին,
Տասնըվեց դարեր՝ արիւնի, հրկիզման,
Տասնըվեց դարեր՝ անհանգրուան դողդոթաներու, խաչելութեանց.
Անո՛նք, հայ ցեղին ընտրեալ յառաջամարտիկները՝
Աշխարհի բոլոր ռազմաճակատներուն վրայ:

Ո՛չ. չկայ դադար. ա՛յս է հայուն ճակատագիրը.
Զահերը միշտ վառ, ջահակիրները միշտ արթուն.
Զէնքերը երբեք վրաններու տակ, երբե՛ք խարոյկներ,
Ա՛յս է հայուն ճակատագիրը.
Ապրելու համար պայքարի՛լ հարկ է մեղի, զոհարերութի՛ւլ,
Զի մեղի համար կեանքը ճակատագրուած է ըլլալ արիւն,
Սակայն չկայ արիւն մը՝ որ յաջողի խեղդամահ ընել մեղ,
Չկայ հարուած մը՝ որ խորտակէ մեր մէջքը, հայուն մէ՛ջքը,
Զի կը հսկեն, տեւականօրէն դէնքի տակ,
Երեսունըվեց ու առաւել երկու պանծալիները,
Աշխարհի բոլոր ռազմաճակատներուն վրայ:

Այսպիսի մարտիկներու հետ
Ի՛նչ խրամատներ վարելի չէ գրաւել, նուաճել դանոնք,
Խորտակել ամբարտաւանները, անցնիլ բարձունքէ բարձունք,
Դիտել դարերը՝ երկնի հողմառատ խորութիւններէն,
Դիտել՝ ինչ որ անցեալի մեր փառքն է, պարծանքը,
Դիտել՝ ներկայ դարերէն մեր Ոսկեդարը,
Երբ Ս. Մեսրոպի մտքին աննման զաւակները,
Ասպարէզ կ'իջնէին իրենց է՛ն չքեղ
Զէնուզարդին այլազանութեամբն ու փողփողումով.
Երէկ կռիւն էր Յոյնին դէմ, Պարսիկին եւ Հռոմին,
Այսօր՝ աշխարհի դէմ միմակ ենք մեր մինակութեան հետ:

Օ՛ն ուրեմն, քալենք մենք ձեռք ձեռքի եւ սիրտ սրտի,
Ա՛լ կը բաւէ քէնը, մնացեալը,
Ա՛լ կը բաւեն ծուռ նայուածքները, անուղիղ կեցուածքները,
Մենք, միեւնոյն կաղնիին արմատները, բունն ու ճիւղերը.
Միթէ մեր կեանքին դէմ չղաւաճանեցի՞ն միեւնոյն դահապետները,
Միթէ միեւնոյն անճիտման դէմ չի՞ ծառանար
Ս. Մեսրոպի մտքին անտեղիտալի գումարտակը.
Տեսէք, ի՛նչպէս կը յառաջանայ, անցուցած՝ սաղաւարտները,
Մինչ լեռնապարէ լեռնապար, անդունդէ անդունդ,
Կը հնչեն մարտահրաւէր դալարափողերը,
Աշխարհի բոլոր ռազմաճակատներուն վրայ:

Ո՛վ Աստուածդ հայուն, պահէ՛ հայութիւնը,
Ո՛վ Աստուածդ Հացեկացիի սուրբ տեսիլքին,
Պահէ՛ հայութիւնը.
Մեր կուրծքերը վէրքերով լի, հասած ենք մինչեւ հոս,
Մեր ամէն քայլն անկում մը եղած է, ապա՝ ամբարձում մը,
Պահէ՛ հայութիւնը.
Ընդմէջ յոյսի, յուսաբեկման եւ վերադարձող յոյսերու,
Տասնըվեց դարեր ապրած ենք ապաւինած մեր Այբուրենին,
Պահէ՛ հայութիւնը.
Ու տե՛ս, դեռ կը շարունակուի երեսունեւութ մարտիկներուն պայքարը՝
Աշխարհի բոլոր ռազմաճակատներուն վրայ:

Միլանոյ, 13 Դեկտ. 1962

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

ՄԵՍՐՈՊԻԱՆ

1

Մ Ա Յ Ր Ե Ր Ը

Կը բարձրանայ քաղաքներէն, գիւղերէն
Հեծֆը կանաչ մայրերուն.
Բողոք դարձած աղաղակները կեանքի
Կը փաթարւին ապագայի անիւին:
Թող զարիւրիւն արքաներ
Որոնց ձեռքին օտար մական կը ծաղկի,
Ու քշնամին կրծէ անյագ մեր շղթան,
Որովհետեւ Հայաստանի մայրերն են
Որ կը կանգնին այս անգամ...